Նախագահ
Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության
Երկրորդ Խորհրդական

Եղբայր, ես պարտավոր եմ

Երկու մանկահասակ եղբայրներ կանգնած էին մի փոքր զառիթափի վերևում, որ նայում էր կապուտակ լճի մաքուր ջրերին: Սա ջրասուզակության հայտնի վայր էր, և եղբայրները հաճախ էին խոսում ցատկ կատարելու վերաբերյալ՝մի բան, որ նրանք տեսել էին ուրիշներին անելիս:

Չնայած նրանք երկուսն էլ ցանկանում էին ցատկել, նրանցից ոչ մեկը չէր ուզում լինել առաջինը: Զառիթափի բարձրությունը այդքան էլ մեծ չէր, բայց երկու մանկահասակ տղաներին թվում էր, թե տարածությունը մեծանում էր հենց որ նրանք սկսում էին առաջանալ, և նրանց համարձակությունն արագորեն անհայտանում էր:

Ի վերջո, եղբայրներից մեկը մի ոտքը դրեց զառիթափի ծայրին և վճռականորեն առաջ շարժվեց: Այդ պահին նրա եղբայրը շշնջաց. «Միգուցե մենք պետք է սպասենք մինչև մյուս ամառ»:

Սակայն առաջին եղբոր շարժման արագությունը նրան արդեն իսկ առաջ էր մղում: «Եղբայր,- պատասխանեց նա,- Ես պարտավոր եմ»:

Նա չլմփաց ջրի մեջ և արագորեն ջրի երես դուրս եկավ հաղթական աղաղակով: Երկրորդ եղբայրն անհապաղ հետևեց նրան: Դրանից հետո նրանք երկուսն էլ ծիծաղում էին առաջին եղբոր վերջում ասված բառերի վրա, որոնք նա ասաց ջրի մեջ գցվելուց առաջ՝ «Եղբայր, ես պարտավոր եմ»:

Պարտավորությունը մի փոքր նման է ջրի մեջ սուզվելուն: Կամ դուք պարտավորվում եք, կամ էլ ոչ: Կամ դուք առաջ եք գնում, կամ դուք մնում եք նույն տեղում: Չկա կես ճանապարհ: Մենք բոլորս էլ ունենում ենք պահեր, երբ մեր որոշումը փոխում է մեր մնացած կյանքը: Որպես Եկեղեցու անդամներ, մենք պետք է հարցնենք ինքներս մեզ. «Ես կսուզվե՞մ, թե՞ միայն կկանգնեմ եզրին: Ես կքայլե՞մ դեպի առաջ, թե՞ պարզապես կփորձեմ ջրի ջերմաստիճանը իմ ոտքի մատներով»:

Որոշ մեղքեր մենք գործում ենք մեր սխալի պատճառով, այլ մեղքեր գործվում են, քանի որ մենք ոչինչ չենք անում: Ավետարանին մասամբ նվիրվելը կարող է բերել հուսախաբության, տխրության և մեղքի: Սա չպետք է մեզ վերաբերվի, քանի որ մենք ուխտի մարդիկ ենք: Մենք ուխտեր ենք կապում Տիրոջ հետ, երբ մկրտվում ենք և երբ մուտք ենք գործում Տիրոջ տուն: Տղամարդիկ ուխտեր են կապում Տիրոջ հետ, երբ նրանք քահանաներ են կարգվում: Ոչինչ չի կարող ավելի կարևոր լինել, քան Տիրոջ հետ կապած ուխտերը պահելը: Եկեք հիշենք Հին Կտակարանում Ռաքելի և Լիայի պատասխանը Հակոբին: Այն պարզ էր, անկեղծ ու ցույց էր տալիս

նրանց նվիրվածությունը. «Ինչ որ Աստուած քեզ ասել է, արա» (Ծննդոց ԼԱ.16)։

Նրանք, ովքեր մասամբ են նվիրված, կարող են ակնկալել միայն մասամբ ստանալ վկայության, երջանկության և խաղաղության օրհնությունները։ Երկնքի պատուհանները կարող են միայն մասամբ բացվել նրանց համար։ Անմտություն չի՞ լինի մտածել. «Ես այժմ 50 տոկոսով կնվիրեմ իմ անձը, բայց երբ Քրիստոսը հայտնվի Երկրորդ Գալստյան ժամանակ, ես կնվիրեմ իմ անձը 100 տոկոսով»։

Տիրոջ հետ մեր ուխտերին հավատարիմ լինելը մեր դարձի գալու պտուղն է։ Մեր Փրկչին ու Նրա Եկեղեցուն հավատարիմ լինելը զորացնում է մեր վճռականությունը և ամրացնում է մեր հոգին, որպեսզի երբ մենք հանդիպենք Քրիստոսին, Նա գրկաբաց ընդունի մեզ և ասի. «Լա՜ւ, բարի եւ հաւատարիմ ծառայ» (Մատթեոս ԻԵ.21)։

Տարբերություն կա մտադրության և գործողության միջև։ Նրանք, ովքեր ընդամենը մտադրություն ունեն գործելու, կարող են պատճառներ գտնել յուրաքանչյուր դեպքում։ Նրանք, ովքեր իսկապես պարտավորվում են ուղղակի հաղթահարել իրենց դժվարությունները և ասում են իրենք իրենց. «Այո, դա շատ լավ պատճառ կլիներ հետաձգման համար, սակայն ես ուխտեր եմ կապել, և այսպիսով, ես կանեմ այն, ինչ պարտավորվել եմ անելու»։ Նրանք ուսումնասիրում են սուրբ գրությունները և անկեղծորեն փնտրում են իրենց Երկնային Հոր առաջնորդությունը։ Նրանք ընդունում և մեծարում են իրենց Եկեղեցու կոչումները։ Նրանք հաճախում են իրենց ժողովներին։ Նրանք կատարում են իրենց տնային կամ այցելության ուսուցումը։

Գերմանական առակն ասում է. «Խոստումները նման են լիալուսնի։ Եթե դրանք չեք պահում մեկ անգամ, դրանք օրըստօրե նվաղում են»։ Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ մենք պարտավորվել ենք քայլել աշակերտի արահետով։ Մենք պարտավորվել ենք հետևել մեր Փրկչի օրինակին։ Պատկերացրեք, թե որքան կօրհնվի երկիրը և կվերափոխվի ի բարին, երբ Տիրոջ Եկեղեցու բոլոր անդամները ապրեն համաձայն իրենց իրական ներուժի՝ մինչև իրենց հոգու խորքը դարձի գալով և պարտավորվելով կառուցել Աստծո արքայությունը։

Ինչ-որ կերպով մեզանից յուրաքանչյուրը կանգնած է որոշման առջև՝ նայելով ջրին։ Իմ աղոթքն է, որ մենք հավատք ունենանք, առաջ շարժվենք, քաջաբար նայենք մեր վախերին ու կասկածներին և ասենք ինքներս մեզ. «Ես պարտավոր եմ»։

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

«Ճանապարհներից մեկը, որով օգնում ենք սովորողներին հասկանալ ավետարանի սկզբունքները, նրանց նկարելու միջոցն է» (*Teaching, No Greater Call* [1999], 166)։ Կարող եք կարդալ հոդվածը, քննարկել ավետարանին նվիրված լինելու սկզբունքը և խնդրել նրանց, ովքեր ցանկանում են դա անել, նկարել ավետարանական միջոցառում, որը պարտավորություն է ցույց տալիս։ Կրտսեր երեխաները կարողէ խորհրդի կարիք ունենան այն բանի վերաբերյալ, թե ինչ պետք է նկարեն։

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Այն ամենը, ինչ ես կարող եմ տալ

Ալիսա Հանսեն

Հնձ անհանգստացնում էր այն հարցը, թե ինչպես էի ես վճարելու այն բաների համար, ինչ ես ցանկանում էի անել ամառվա ընթացքում՝ դասեր, գործնական հանդիպումներ, ամառային ճամբարներ և այսպես շարունակ։ Ես կարծում էի, որ կսկսեի լաց լինել։ Այնուհետև ես հիշեցի այն ամենը, ինչ սովորել էի Տիրոջը վստահելու և հավատալու վերաբերյալ։ Ես որոշեցի հանձնել իրավիճակը Տիրոջ ձեռքը և վստահել, որ եթե դա լիներ Իր կամքը, Նա ճանապարհ կպատրաստեր։

Դրանից հետո ոչ շատ ժամանակ անց իմ մայրը գտավ մի չկանխիկացված վճարագիր, որը ստացել էի ավելի վաղ այդ տարի կատարած աշխատանքի դիմաց, և հենց հաջորդ օրը ես նամակով ստացա մի փոքր դրամական պարգև՝ մրցման ժամանակ երկրորդ տեղը գրավելու համար։ Սա մեծ վկայություն էր ինձ համար, որ Աստված իրոք ապրում է, որ Նա սիրում և հոգում է ինձ համար և որ Նա կապահովի իմ կարիքները։

Ես անչափ լցված էի երախտագիտությամբ և սիրով իմ Երկնային Հոր և Փրկչի հանդեպ։ Ես

չափազանց ուրախ էի: Ես փափագում էի ցույց տալ, թե որքան շնորհակալ էի, փառաբանել Աստծուն լավագույն ձևով, որ ես կարող էի և կիսվել այդ զգացմունքով: Ուրիշները սա արել են երգ հորինելով, բանաստեղծություն գրելով կամ նկար նկարելով, բայց ես ինձ անհամապատասխան էի զգում դրանցից ցանկացածն անելու մեջ: Ես հասկացա, որ միակ բանը, որ ես կարող էի տալ, որը կհամապատասխաներ փառաբանմանը, կլիներ իմ կյանքը՝ լինելու «օրինակ հաւատացեալներին» (Ա Տիմոթեոս Դ.12), տալու իմ կյանքը Քրիստոսին: Դա այն ամենն է ,ինչ Նա խնդրում է, և դա այն ամենն է, ինչ ես կարող եմ տալ:

© 2011 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/10: Թարգմանության հաստատումը. 6/10: *First Presidency Message, July 2011*-ի թարգմանությունը: Armenian 09767 201

Հավատք • Ընտանիք • Սփոփանք

Եկեք տաճար և խնդրեք ձեր օրհնությունները

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և դարձնել Սփոփող Միությունը ձեր իսկ կյանքի ակտիվ մասը:

Քույրեր, մենք մեծապես օրհնված ենք: Փրկիչը այս Եկեղեցու գլուխն է: Մենք առաջնորդվում ենք ապրող մարգարեների կողմից: Մենք ունենք սուրբ գրությունները: Եվ մենք աշխարհով մեկ ունենք բազմաթիվ սուրբ տաճարներ, որտեղ մենք կարող ենք ստանալ անհրաժեշտ արարողություններ, որոնք մեզ կօգնեն վերադառնալ մեր Երկնային Հոր մոտ:

Նախ մենք գնում ենք տաճար մեզ համար: «Տաճարի հիմնական նպատակն է, - բացատրել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը, - տալ անհրաժեշտ արարողությունները սելեստիալ արքայություն մեր վեհացման համար: Տաճարի ծեսերը տանում են մեզ դեպի մեր Փրկիչը և տալիս են մեզ այն օրհնությունները, որ մատչելի են Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Տաճարները ուսում ստանալու ամենամեծ համալսարաններն են, որ հայտնի են մարդուն, որոնք մեզ գիտելիք և իմաստություն են տալիս աշխարհի Արարման մասին: Օժտման հրահանգները մեզ առաջնորդություն են տալիս այն մասին, թե ինչպես մենք պետք է ապրենք մեր մահկանացու կյանքը:. . . Ծեսը բաղկացած է մի խումբ հրահանգներից, թե ինչպես մենք պետք է ապրենք, և ուխտերից, որոնք մենք պետք է կապենք Փրկչին հետևելով արդարակյաց ապրելու համար»:[1]

Բայց մեր տաճարային ծառայությունն այդքանով չի սահմանափակվում: Նախագահ Բոյդ Ք. Փաքերը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահը, սովորեցրել է. «Գործելով որպես փոխանորդ որևէ մեկի համար, ով անցել է վարագույրի մյուս կողմը, դուք ձեր առջև կունենաք ուխտերի վերանայումը, որոնք դուք կապել էիք: Դուք ձեր մտքում ցայտուն կերպով կունենաք հոգևոր մեծ օրհնություններ, որոնք կապված են Տիրոջ տան հետ: Ուխտերի և արարողությունների կենտրոնում օրհնություններն են, որոնք դուք կարող եք խնդրել սուրբ տաճարում»:[2]

Եկեք տաճար և այնուհետև կրկին եկեք: Տաճարային ուխտեր կապելն ու պահելը մեզ կպահի բոլոր օրհնություններից մեծագույնի՝ հավերժական կյանքի ճանապարհին:

Բարբարա Թոմփսոն, Սփոփող Միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդական:

Սուրբ գրություններից

Եսայիա Բ.3, Ա Կորնթացիս ԺԱ.11, Հայտնություն Զ.13–15, Վարդապետություն և Ուխտեր 109

Մեր պատմությունից

Մարգարե Ջոզեֆ Սմիթը հաճախ էր խոսք ուղղում Սփոփող Միության քույրերին նրանց ժողովների ժամանակ: Նավուի տաճարի կառուցման ժամանակ Մարգարեն հրահանգներ տվեց քույրերին վարդապետության վերաբերյալ՝ նախապատրաստելով նրանց ստանալու ավելի շատ գիտելիք տաճարային արարողությունների միջոցով: 1842թ. նա ասաց Մերսի Ֆիլդինգ Թոմսոնին, որ օժտումը «քեզ դուրս կբերի խավարից դեպի սքանչելի լույս»:[3]

Մոտավորապես 6000 Վերջին Օրերի Սրբեր ստացան տաճարային արարողություններ Նավուից դուրս գալուց առաջ: Նախագահ Բրիգամ Յանգն (1801–77) ասել է. «Այնպիսին էր սրբերի դրսևորած հուզմունքը տաճարային օրհնություններ ստանալու վերաբերյալ, և այնպիսին էր հուզմունքը մեր կողմից նրանց ծառայելու համար, որ ես իմ անձը ամբողջովին տվել էի գիշեր ու

ցերեկ Տաճարում Տիրոջ գործին, չքնելով ավելի, քան միջին հաշվով օրական չորս ժամ, և տուն գնալով շաբաթական մեկ անգամ»:[4] Տաճարային ուխտերի ուժն ու զորությունը վստահություն ներշնչեցին Սրբերին՝ մինչ նրանք թողեցին իրենց քաղաքը և տաճարը դեպի անհայտը ճամփորդելու համար:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ռոբերտ Դ. Հեյլս, «Տաճարի օրհնությունները», *Լիահոնա,* հոկտեմբեր 2009, 14 :
2. Boyd K. Packer, *The Holy Temple* (1980), 170, 171.
3. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 441:
4. *Teachings of Presidents of the Church: Brigham Young* (1997), 299.

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ի՞նչ փորձառություն ես կկիսեմ նրանց հետ, ում այցելում եմ, որպեսզի ամրացնեմ «տաճար այցելելու» նրանց վճռականությունը:

2. Ինչպե՞ս կարող եմ արժանի լինել տաճարային օրհնություններին:

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

© 2011 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in USA.

Անգլերենի հաստատումը. 6/10: Թարգմանության հաստատումը. 6/10: *Visiting Teaching Message, July 2011*-ի թարգմանությունը: Armenian 09767 201